





կեն : Ասկէ զսա մեր անձին գէտ ալ սպառնալիք պարունակող գրութիւններ կը գրկեն մեզ :

«Մենք այդ տեսակ հրատարակութիւններու եւ սպառնալիքներու աւանդ կախողներէն չըլլալնս եւ լնգինս գեո 25-26 տարինս առաջ պատռած ըլլալուն համար բանէ մը չը վախնալնս նկատողութեամբ առնենին հարկ էր : Այդ գրապարտութեանց աղբիւրն ալ կրկին պուրկարներուն օգուտ մը տալու կամ առնոց քննելու համար թուրք անուանը կրող պուրկար լրտեսներուն մէկ գրմումը ըլլալը բացորոշէ :

«Բարձրագոյնս իշխան Թէրաթեանի հակառակորդ ըլլալնուս խնդրոյն գալով . յեղափոխականները կտրեն կաւերնս , կը կտրեն կը թափեն , կրկին ինչ կը քննաւս ըսելով կը պոսան : Թուրքներուն բարբարոսութիւն կը վերագրեն . ահա այս սուտ քաղաքականութիւնը ամէն բանի յարմարցնել կու գոյ : Իշխանին դէմ մենք գրելովք բան մը չունինք : Ալէքսանտր Պախէնպէսի իշխանը գահընկէց ընողը մենք չենք : Սթանպուլը Սօֆիայի բազմամարդ մէկ փողոցին մէջ սպաննողը մենք չենք : Վերքովիք Պօլսոյ մէջ մեղքողը մենք չենք : Վառնայի մէջ մղկիթը այրողը , հոճան սպաննողը մենք չենք : Ասոց սպաննորդները պահող , մէջտեղ չը հանողը մենք չենք : Թուրքներուն անարգանք ընողը մենք չենք : Երճարաններու մէջ եւ փողոցները հրապարակաւ «Իշխանն ալ Ալէքսանտրի պէս գլուխը պիտի ուտէ » ըսելով պոռոցողը մենք չենք : Սօֆիա նրտաքին Գործոց Նախարարութեան պաշտօնատան մէջ իշխանին պատկերն . . . քիւն . . . մենք չենք : Քովը Գարնապատիցի երկու ինքնա սղանիք առած ըլլալնուն համար իշխանը «քրպար իլլէթի» ենթաբնուած տարածայնող ու պնդողը մենք չենք : Իշխանին գէտ վատ նպատակներ ունեցողները պուրկարները ըլլալով եւ ասոնցմէ ումանք բռնուած ըլլալով հանդերձ , իսլամ աղայ մը եւ Այտոսի ուսուցիչը շղթայակալ քանտարիկն սուր-

ղը մենք չենք : Մենք իշխանէն օգուտ մը չսպասելով , իրեն էն աւելի հրնազանդ հպատակները Թուրքերը ըլլալը կը յայտարարենք :

«Յոռաշիկային քիչ մը ալ աւելի բացատրութիւն ու մանրամասնութիւն տալու նպատակաւ առ այժմ Այտոսի եղանակը կարճ կը կապենք » :

# ԱՐԴԻԻՆՔԻՆ ՏԵՂ ՊԱՏՃԱՌԸ

—Նրէկ՝ բարեկամ մը ներկայացու խմբագրատուն . հետեւոր թաղի մը պատուաւոր մէկ քնակիչը . որ յոգնած , զաղբած , պարտաւոր , կարողութիւն չէր զգար վրան՝ ընթան բանտու : Ինք որդէն մարմնիդ ու գէր՝ կէսօրուան հեղձուցիչ տաքին ցամաքային երկար ճամբորդութիւնն մը ընել ստիպուած ըլլալով՝ բոլորովին ընկճած՝ քրտնք թաթախ կը հեւար : Ժամանակին՝ օր տեսած , առեւտրական գործի վարած յարգելի անձնաւորութիւն մըն էր , որ հիմա ընտանիքը պատուաւորապէս ապրեցնելու համար գործ կը փնտռէր եւ նախկին քրտնալի մը հետ ժամադիր եղած էր այս կենտական խնդիրն վրայ տեսակցելու : Ունեւոր մէկու մը աչքին թրեւս արժէք չունենար ճամբորդութիւնը բայց մեր բարեկամին համար՝ որ քիչ մը քառասունն ալ անցած էր , ծանր զոհողութիւն մըն էր այս տաքին այնչափ ճամբայ առնելը կամ . . . քաղիւր , եւ ամենէն ցաւալին՝ բարեկամն ալ չէր գտած որոշեալ ժամադրաւայրը ուր քառորդ մը կէս ժամ սպասելէ հոտ , յուսահատ կացութեան մը մէջ խմբագրատուն եկած էր քիչ մը հանգիստ առնելու : —Լսելով մեր բարեկամին այս պոտմութիւնը բնւէ չի զարմացնէ , որով . հետեւ ժամադրութիւնները շատ քիչ արժէք ունին մեզ համար եւ առաջին անգամը չէ որ մէկը այս ինչ ժամուն ո՛ր եւ է տեղ գտնուելու խօսք տայ ու

ինք բնաւ չի ներկայանայ ժամադրաւայրը , ի գուր սպասցնելով հոն իրեն ժամադիր եղողը : Իրաւ է որ գործնական կեանքին մէջ զանազան արգելքներ կրնան պատահիլ որոնց պատճառով մարդ չի կրնայ յարգել ժամադրութիւնը եւ ասկայն ասանկ պարագաներու մէջ գոնէ կանուխէն երկտողով մը եղլուութիւնը խմցնել եւ կամ եթէ ասիկա անկարելի ըլլայ . չոյն իսկ ժամադրաւայրը նոյնպէս մը հասցնել ու ներողութիւն խնդրիլ անհրաժեշտ չէ՞ միթէ . . .

—Ինչ աղնիւ մարդիկ են անոնք որ չեն յուսադիր , չեն խոստանար , մեծխօսիկութիւններ չեն ընել , մէկ գէտք ունին , կը մերժեն բացարձակապէս եթէ իրենց ձեռնհասութենէն վեր է պահանջուածը . ասանկ ուղղափոխ անձինք երկրպագելի են , հաւատացէք : Իրաւ , գործի համար գիմում բնոյն անշուշտ ծանր կազդէ մերժումն ու չիտակ խօսքը , բայց գոնէ կացութիւնը բացարձակապէս կը պարզէ եւ պարտա յոյսերով ժամադրաւայր ըլլով կը փրկէ առեւտրական , դպրոցական , փաստաբանական ու եւ գործի կամ պաշտօնի հետապնդողը :

Ահա կը ճառատուած նոխարաւոր «Մանգուլ» մէկ թիւին «Ողորդակ» խմբագրութիւնը կը տարվեցնեն խորագրով բարոյախօսական առաջնորդողին , որուն երկրորդ անգամուան մտածութիւնը խմբագրութեան կարգ մը խորհրդածութիւններ ներշնչեց ինծի : Այդ իմաստալից յօդուածին յարգելի հեղինակը՝ Գասի , Նարեկի ներհուն թարգմանիչը , չէր գահացած միայն ժամադրաւայրը չի յարգողին այլապէս մէկ արարքով , այլ թիւթին առաջին երեսին շորտուկէս սրենակներուն մէջ , իր պարզ , սահուն ու ժողովրդական , բայց միեւնոյն ճարտարաբանաւոր գրելակերպով կը ծանրանայ ուրիշ նմանօրինակ այն սուղ երեւոյթներուն վրայ որոնցմէ կարելի չէ ըլլայ համայնքի մը բարոյական նկարագրին վրայ գաղափար մը կազմել :

Ժամադրաւայրէն յետոյ յօդուածագիրը կանցնի ամուսնական խնդիրներու ուր ցերեւոյթը նոյն է ոմանց քով :

Երիտասարդ մը հինգ վեց աղջիկներու բնակարանը կը յաճախէ , ամէնուն ալ կը համակիր , տո՛ւնն ալ վրայ կը հիանայ գլխի բարեմամբութիւնները մասնաւոր իրենց իրաքանչիւրին եւ այնպէս մը՝ ցոյց կուտայ որ ալ վերջնականապէս որոշած է ամուսնանալ անոնց ամէնուն ալ կը հետ : Օր . խորհրդներուն ամէնքն ալ կը յուսան զսա զսա եւ յաճախ երկրորդական թիկնածուներէն երես կը զարձենն ճշմունտի պէս նկատելով զիրենք եւ սակայն վերջին պահուն գործը ջուրը կ'իջնայ . երիտասարդը կամուսնանայ բոլորովին ուրիշ աղջկան մը հետ եւ ոչ ոք կը զատապարտէ զայն :

Երեւակայեցէ՛ք թէ ինչչա՞փ դասն կըլլայ այն տոնն յուսաբարութիւնը միւս խեղճ աղջիկներուն որոնք շատ անգամ իրենց կուտութիւնն ալ վրայ տալով կը տգիտան . կարծաբոյական իրենց ձեռքը խնդրող ձեւաղին նման :

Փաստաբաններու հետ գործ ունեցած էք երբէք , կը հարցնէ Գասի . եթէ այդ դասնութիւնը չէք ճաշակած , ստուգ գաղափար չէք կրնար ունենալ ձգձգումին ու գնաւ եկուր ին իսկական չափին վրայ . օրը նոր՝ պատրուակը նոր . երեկ այսինչը իսկայն առջի օր այսինչի՛ն հետ խորհրդակցեցայ . եւ ամենէն յոգին՝ այս յերեւոյթները մտիկ ընելու համար ամեն օր պարտաւորուած եւ գրամ վճարել :

Իրաւունք ունի Գասի , Աստուած թշնամի իրդ անգամ հետու . պահէ վաշխառու փաստաբաններուն եւ անբարեխելճ բժիշկներուն . . . երեսն :

Ճարտարապետները ամէնուն քար հանել կուտան ուղղաժողովեան գործին մէջ , կըսէ Գասի . փա՛ռք Աստուծոյ որ Արտասանանի լնթիւրդը խաղախ ճարտարապետներու հետ գործ չունի , աւելի հացի առենելու պէտք ունի ան քան թէ պերճանքի ցուցագրութիւններուն :

Դարուս ողին ուղղաժողովեան կը պահանջէ , հաւատացէք ասոր , կեղրակայնէ յարգելի յօդուածագիրը իր տեսութիւնները ամփոփելով , այն-

## ՆԵՐՍԷՍ ՍՅՏԱՐԱԿԵՑԻ

(Արտատպուած ԲԱԶՄԱԿԵՊ հանդէսէ)

Պարսից զօրքի հրամանատարն է լինում քաջ Շաֆար խանը : Նկատելով Ռուսաց զօրքի սակաւաթիւ լինելը , թշնամիներն ամեն ուղից չընդհատուած են նորանց : Օգոստոս ամսի չոգ եղանակին անյորդի գաշտում քաջութեամբ պատենաղովով ամբողջ օր Ռուս զինուորները սաստիկ ծարաւութիւնից չեղացած են լինում . այնտեղ Պարսից զինաւորների համար անդադար ուղտերի վրայ բարձած թուրքներն չենրով (մեծ տկերով) Գառախ գետից ջուր էին հասցնում : Երկու վերստ հեռաւորութեամբ էջմիաշնի վանքից մի մեծ առու կայ , որ ջրում է վազարչապատի այգիները : Պարսիկները դիմաւոր գետից ջուր են բաց թողնում այդ առուն : Երբ Ռուսաց արապընթաց զօրքը հասնում է առուն՝ ամբողջ օրը ծարաւութիւնից սաստիկ նեղացած եւ թուլացած զինուորները տեսնելով ջուրը՝ հրացանները թողնելով զլուխները կոխում են առուն մէջ ջուր խմելու : Թշնամիները դորան են սպասելիս եղել . եւ յարձակուելով ծարաւութիւնից զաւկացած զինուորները վերայ՝ կտրում են նորանց զլուխները : Ռուսները այնքան տանջուած եւ թուլացած

են եղել ծարաւից , որ մինչեւ անգամ տեսնելով իրանց գլխի վերայ Պարսից թուրք՝ զարձակ անզգայ կերպով ջրի միջից զլուխներն անգամ չէին վերցրել : Այդ տեղ մի քանի հարիւր սողալով ըսպանուեց . կրասովակին տեսնելով այս ճարտարութիւնը՝ կարտեղով ճանապարհ է բացում եւ կոխւել վերանորոգում : Եւ վանքի տանիքից տանիքից տեսնելով իսկայն ստիպեցի վանքում գտնուող զօրքի գլխաւորին օգնութեան հասնել , ընդ առաջ գնալ զօրքով եւ թնդանոյնիցով Պարսիկները տեսնելով որ էջմիաշնից օգնութիւն է գալիս կրասովակու զօրքին՝ զեռ օգնական զօրքը տեղ չհասած , մանաւանդ Շաֆար խանի եւ մի քանի երեւելի Պարսիկ գլխաւորների սպաննուելու պատճառով , զանուած են ի փախուստ եւ կրասովակին զայլիս է էջմիաշնի . Նորա գէտքի վերայ այս ճարտարութեան պատճառած տխրութիւնը բոլորովին չէր երեւում , այլ զուարթ էր գէտքով կարծես թէ ուրախ զօրանքից էր վերադարձել :

Պատկերին այս առիթով լուրը ստանալով եւ թողնելով Արտասագառ բերդի պաշարումը՝ իւր զօրքով աճապարից հասաւ էջմիաշնի . եւ սաստիկ զայրացած՝ շատ անբաւականութիւն յայտնեց գէներալ Կրասովակուն , թէ ինչու մի վանքի (էջմիաշնի) վերկութեան համար զոհել է հարիւրաւոր զինուորներ : Եւ կամենում է կրասովակուն հնարակիլ բարձրագոյն զինուորական գաղափարներ : Տեսնելով որ Պատկերից դիտաւորութիւն ունի ան-

պատճառ վնասել կրասովակուն , բոլոր գէներալներին ներկայութեանն եւ պաշտպանեցի կրասովակուն ասելով Պատկերին . « Ես կը բողոքեմ կայսերին եւ որպէս սուրբ աւետարանի աշակերտ՝ բոլոր ճշմարտութիւնը կը յայտնեմ : Ըստ իմ պարտաւորութեան եւ յառաջագոյն խորհուրդ տուեցի Ձեզ առաջ Երեւանի բերդը պաշարել եւ երբ Աստուած յաջողէր այդ բերդն առնել , այնուհետեւ՝ Նախիջեւանի , Արտասագառի եւ Պարզարապատի բերդերն առանց կուռյ առձնատուր կը լինէին , սրովհետեւ Երեւանի բերդն է բոլոր նահանգի բախալին : Գուք չըսենք՝ ճեղք ինձ լսել , Երեւանի բերդն թողած՝ բաժանեցիք զօրքի զօրութիւնը , գնացիք Արտասագառ : Գնեալով կրասովակին միայն էջմիաշնի վանքի փրկութեան համար չէ եկել , թէ եւ էջմիաշնին էլ քիչ ծառայութիւն չէ մատուցանել թաղաւոր կայսրի զօրքին . — Երբ հացի պաշարի զգուլի կարտուութիւն ունէր զօրքը էջմիաշնին 20 հազար փուտ ցորեն իւր գաղտնի շտեմարանից ձրի աւեց . միւր միարանութիւնն իւր վերջին լուսն չիմայեց , այլ քրտատնէտայլայլ եղբայրսերաբական հոգով մատակարարեց ինչ որ կարող էր : Վանքում ձիւթ զած 300 զինուորները չորս փոքրիկ թնդանութիւնով կարող էին գէտ գնել Արաո Միլլալի 60, 000 հողուց բաղկացած բանակին . եւ եթէ մենք անձնատուր լինէինք Պարսիկներին նսեմութիւն չէ՞ր լինի Ռուսաց կայսերական զօրքի եւ զէնքի պատուին . եւ առիթ չէ՞ր լինի թըն-



քան սիրուն որքան բարոյակից ձեռք մը տակ , զորոնք «Իրաւունք» ի անձուկ էջերը միայն չեն թուլատրեր զժր խտաբար մեղի ամբողջութեամբը արտագրելու — Ինչո՞ւ խաղել մարդ մը ինչո՞ւ զուր յոյս ներշնչել մէկու մը որուն օգնել չես ուղեր , ինչո՞ւ հեռուոր թաղէ մը մինչեւ քու ոտքը բերել քեզի յուսողը մը ու այնչափ յոգնութիւններէ ետք քիթին խնդալ . ահաւասիկ անբարոյութիւն մը , որ ոչ Վալաթիոյ եկեղեցի՝ ամեն հինգշաբթի միւս վառելով , ո'չ Հիւանդանոցին հոցապին տալով եւ ոչ ալ բարեպաշտի ու մարդասէրի կեղծ ձեւեր առնելով կը փոխարինուի :

Ինչպէս կ'ը տեսնես՝ բարոյական դասեր են ասոնք , սիրելի ընթերցող , ամեն տեղուս՝ քի եւ ամեն դասակարգի մարդիկներուն համար , եւ կարծէ որ այս անասի գրուածքները միայն կարգացած ըլլալու համար չի կարգանք : Զգուշանաք սակայն միակողմանի ու կարծաւոր դատողութիւններէն եւ ան ինչ բանը չար է , այն ինչ մարդը վատ է ըսելով նոյն հետաքննող զօրք չարակցէ : Պէտք է միշտ մեղմացողից պարագաները նկատի առնել , ահա ասոր համար է որ հոգեբանները ամենէն արգարք պահողները եղած են : Խմբագիր մը , դատարար մը որ այս չքանաղ կարողութիւնէն զուրկ է , երկուսքն ալ անարժան են իրենց պաշտօնին :

Քասիմ , ինչպէս կ'արեւի է զինքը երթաղբել , խելացի ու իմաստասիրող մարդ անէր խորհայեաց հրապարակագիր մը ըլլալու է : Եթէ Էրեմի խեղճ յորտածագիրը ազատ մըջալարի մէջ ծնած ու սիրուն գրիչը թրքակէն անձուսի պրաքնութեան ենթակայ եղած չըլլար , պիտի ուզէր որ Քասիմ՝ արդիւնքէն աւելի՝ ծանրանար պատճառին վրայ : Ինչպէս կատարեալ ուղղաւոր է թիւն , կատարեալ բարոյական սպասել ժողովուրդէ մը որուն ետին դարաւոր ստորկութիւն մը պատնէշուած է : Կատարեալ բարոյական ունենալու էական պայմանն է քաղաքակրթութիւն եւ խղճի կրօնք , ազատ երկիրքի եւ

արդարագատ մարդասէր կառավարութեան մը հովանիին տակ : Մին՝ անոնց միւսին՝ անկատարեալ պիտի մնայ : Ինչ օգուտ գլուխը գտնանել երբ անդին ստամոքսը միշտ հիւսնող վիճակի մէջ է : Մեր ներկայ տեսլար կ'ստան զիտեղով , մենք փափկանկատութիւններ սպասել կը նմանի սոխակի մը զոր վանգակուած կը պահես , ու կուզես որ ան անուշ անուշ երգէ , յոյս կուզես ներշնչել մարդու մը՝ որուն յուսահատ չըլլալովն համար միջոց մը չես հայթայթեր :

Կուգի՞ն հիմա , անգիւ ընթերցող , որ կատարեալ բարոյական տէր դառնաս , ու քեզի հետ ամբողջ հայ ազգը , ջանանք նախ մեզի ամենուս ցանկալի ազատութիւնը ձեռք բերել , ու այն ասին մնացեալ մեր խելացութիւնէն կ'ստան պիտի ունենայ . եւ այն ատեն ուղղաւոր եւ բարոյացիները շատ իրաւունք չպիտի ունենան մեզ «Արդիւնք» անուանելու :

Ինչո՞ւ Իրանաւորները բուն իսկ Անգլիայիցներէն աւելի խորամանկ են , ինչո՞ւ Հիւանդանոցի վատագործին չեն ներշնչել , որովհետեւ խեղճերը ճշշուածներ են ու հալածուածներ :

Նախ պատճառը , սիրելի Քասիմ , եւ , ապա , արդիւնքը . . .

Վառնա 0 . 0 .

## ԱԶԳԱՅԻՆ

ԵՐՈՒՍԱԼԱՅԻ Ի ԵՐԼՈՒՅԵ ԽԵՍՈՆՆԵՐԸ ԴԵՆԱՆՎ ՎՈ՛Ր ԸՄԵՐԺԱԾ Է ՊԱՆՈՅ ՎԱՐՇԱՅԻՆԵՐ ԵՆ ԵՐԼՈՒ ԿԱՏԱՐԻՒՄԵՐԸ ՆՐԱՄԱՆՆԵՐՈՒՆ ՀԱՄԱԿԵՐԱԿԵԼՈՎ ՊԱՆԻ ԵՐԹԱՅ ՀԱՅԻՆ ԽԱՂԻՆ ՀԱՄԱՐ : ՊԱՆԵՆ ԶՐԿՈՒԾ ԲՆԻՅԻՆ Տ . ԽԱՅԱՄԱՆ ԿՐ ՎԵՐԱԴԱՆՈՅԱՅ : ԿՐ ԱՎԱՍՈՒՆ ՈՐ ԱՅԴ ՀԱՅԻՆ ԽՈՅ

Նամուն քաղաքներէն եւ խախտուածքի եւ այնուհետեւ ո՞վ պիտէ ինչ տեսակ ելք կուենար պատեալով » : Պատկերին լսելով իմ խօսքերն եւ նկատելով , որ շտաբի գլխաւորը , կոմս Սուխովն եւ կոմս Բենկինգտոն արդարացի են գտնում իմ բերած փաստերը , զիջաւ բարկութիւնից եւ գնեկալ կ'ըստեմ ձախորդ պատահունքը ընդունեց ուսական 4000 զօրքի յայթայթելու Պարսից 60 . 000 ի դէմ եւ պարգէի ներկայացրեց պատերազմի մէջ քաջութիւն ցոյց տուողներին : Բայց փորձառու եւ շրջահայեաց անձինք նկատուած էին , որ Պատկերին առաջնայ մ երմութիւնը չունէր զէպ ինձ թէեւ աշխատութեցոյց չտալ իւր ստանութիւնը : Ռուսաց զօրքի համար դարձեալ հացի կարօտութիւն զգացուեց : Ես տեղեկանալով որ կողք գեղու մարդտըր ցորենի շտամարան ունի (այս լուրը հաղորդել էին ինձ աշտարակիցիներն , որոնք Երեւանի սարգարի հրամանով պատերազմի առիթով գաղթել էին Ուշտարակից կողք գիւղը) առանց Պատկերին իմացնելու իմ հուստարիմ մարդկանց ուղարկեցի կողք ստոյգն իմ մանալու : Ես չգիտէի թի առանց գլխաւոր հրամանատարի թոյլտուութեան չէ կարելի մեր բանակից մարդ ուղարկել . գլխաւորական օրէնքով այդ յանցանք է : Բայց եւ այնպէս իմ ուղարկած մարդիկն ողջամբ վերադարձան եւ ստոյգ լուր բերեցին , թէ կայ ցորենի ամբար , թէեւ գոցէ

այնքան չլինի , որ մինչեւ պատերազմի վերջը բոլոր զօրքին բաւական լինի : Պատկերին յայտնեցի ցորենի մասին . նա ուրախութիւնից մի ապաւանակ հոգեւորականի ոսկի առաջարկեց ինձ լրաբեր մարդկանց քաջելու . չընդունեցի յետ դարձի տուրքով ոսկին . ասելով թէ ես արդէն նորանց վարձատրել եմ : Նա ամիջապէս կարգադրուի է մի հատուած հեծեալօրք եւ հետեւակ , երկու թիթեւ թնդանով կոմս Բենկինգտոնի հրամանատարութեամբ ուղարկել կողք : Գնացողներն յայտնուեցին վերադարձան , բերելով ցորեն , թէեւ այնքան չէր եղել , որ գոնէ մի ամիս բոլոր բանակին բաւական լինի : Սարգարապատի Հայերը գաղտնի լուր տուեցին ինձ , թէ Երեւանի սարգարի հզորը Հասան խանն այնտեղ բերդում ցորենի մեծ ամբար ունի իւր . ինքն էլ սակաւ զօրքով մնում է բերդի պաշտպան (Այս բերդն եւ Սարգարապատ գիւղն ինքը Հասան խանն է կառուցել իւր սեպհական արդիւնքով եւ մեծ աշխատանքով երախս քեզից բաւական հեռուորութեան վերայ մեծ առու հանելով՝ առել է գիւղացիներին թէ ցանքս եւ թէ բերդը պէտքերի համար ) : Յայտնեցի Պատկերին եւ խորհուրդ տուեցի շուտով Սարգարապատի բերդը պաշարել հաւատարմելով , որ շատ կարճ միջոցում առանց զօրաւորութեան կ'ուսածի եւ զօրքի հացը բաւական ժամանակի համար ձեռք բերուած կը

տուող վարդապետը ե իր մեղսակիցները (այլ եւ այդ բառը կարծէ գործածել) բունի կերպով Պալիս տարուին եւ հաշիւները առնուին : Մինչեւ այսօր ինչ որ գողցած են կը բաւէ :

ՍԱՆՍԱՐԱՅԻՆ ՎԱՐՄԱՐԱՆԻ ԽՈՐՈՇ ԶԵՐՈՒՄԻՆ ԽՈՐՈՇ ԿԱՐԿԵՐ ՆՐԱՄԱՐԱԿՈՒԾ Է 1891 ԷՆ ԻՆՉԵ 1901 ԹՈՒՆԿԱՆՐ 110 շրջանաւարտ ելած են : Քսան տարուան ծախքը եղած է 3 . 572 . 666 շրուշ . այս գումարէն զատ՝ որ բարերար Սանսարաւանի կողմէ հարոտութեան հանդիման տրուած է , վարժարանը մուտք ունեցած է աշակերտաց թոշակներ , երաժշտարանի , կազմատան , արհեստանոցի եւ այլ հասոյթներ :

Վերջերս Պալիս մէջ Սիրքէճի՝ պանդակ մը գնուած է 19,000 ոսկիի (Սանսարախան անունով ե կը բերէ 1444 լիրա հասոյթ) : Վարժարանի դրամագլխի հասոյթին 100 ին 10 ը կը յատկացուի Եւրոպայի մէջ ուսուցիչներ պատրաստելու :

Տարիներ եղած են որ աշակերտաց թիւը մինչեւ 200 ի բարձրացած է : Վերջին 10 տարուան մէջ նուազագոյն թիւը եղած է 75 :

«Նատէժտար» հայ դերասանական խումբը պատրաստուած է Շէքսպիրի հեղինակութիւնը եղող Բոմբո ժիլիէթ թատերախաղը ներկայացնել վաղը իրիկուն Բիկա պարտէզին մէջ :

Այս խաղին առաջին անգամ ներկայացուելու ե հայ թատերաբեմին հին աշխատաւոր Տ. Գալէմճեանի ի նպաստ ըլլալու պարագաները կը յուսադրեն

որ թատերասէր հատարակութիւնը թէ՛ հետաքրքրութեան ե թէ՛ վաղեմի ու աշխարհ աշխատաւոր մը վարձատրելու պարճանաճութեան մղուած խուսնեբամ գիւմէ թատերաւայրը :

—Քաղաքի մէջ հայկական երկու նոր ծխախոտի գործարաններ բացուած են : Այս գործարաններէ մին Աղիզեան հարազատներու սեփականութիւնն է եւ միւրը Տ. Սարգիս Մարտիրոսեանի : Երկուքն ալ ինքնօրէնութեամբ առաջ եկած եւ դրամի ու վարկի աէր եղած բնիկ վառնացիներ են : Յաջորդութիւն ե յառաջդիմութիւն կը մաղթենք :

## ՊԱՊԱՏԱՂԻ ՆՈՐ ԵԿԵՂԵՑԻՆ

Տէր

Տարիներ առաջ քաղաքիս Հայոց հրկիզեալ եկեղեցւոյ վերաշինութեան համար կարգեալ յանձնախմբի մը նախաձեռնութեամբ հանգանակութիւն եղած էր Ռոմանայեակ եւ Պուլկարաբնակ Պատ . Ազգայիններէ . Որոնց նպատաներով շինութիւնն աւարտած եւ օծուած է Պապատաղի հայուութիւնը Ս . Աստուածածնի անուամբ սերուն եկեղեցիով մը : Հոգաբարձութիւնս նուիրական պարտք կը համարի եւ որոշած է ամեն տարի Ս . Աստուածածնայ տօնին օրը Ս . Պատարագ մատուցանել տալ ի հանգիստ հոգեոց ննջեցեաց սատարողաց եկեղեցւոյ վերաշինութեան :

Որուն հրատարակութիւնը կը խնդրեմք տէր՝ մեր խորին երախտագիտական զգացմանց արտայայտութիւններով :

Մնամք Յարգանքի դիմաց Հոգաբարձութեան

Առնաղպիւր Ատենապետ  
Հ . Հայթախան Մ . Գառապեան

Ինի : Սեպտեմբեր ամսի 20 ին Սարգարապատի բերդը պաշարեց . Պատկերին ինձ հրաւիրեց վառել առաջին թնդանովի պատրոյը Պաշարումն երկար չտեւեց . թնդանովի անգիւր պարսպի մի կողմը փլաւ . խանը բաւական պարտաներ գնել տուեց պարսպի քանդուած մասի տեղում . ուրակոծութիւնը շարունակեց Հասան խանը կապեմով որ Ռուսները յարձակմամբ կը մտնեն բերդն եւ իրան էլ կամ կը վնասն , կամ չկրի կը բռնեն իւր զօրքի հետ ի միասին , գիշերը միւս կողմի դռներով փախչում է : Ռուսներն զեւ շարունակում էին ուրակոծութիւնն , երբ առուօտանը շատ կ'սնուի Սարգարապատի քահանաներն եւ ժողովրդականը լուր ուղարկեցին ինձ , թէ Հասան խանը իւր զօրքով դիչերը փախա : Չայնեցի Պատկերին եւ քահանաների ու ժողովուրդին էլ պատուէր ուղարկեցի բերդի գոնեքը բանալ եւ խաչ ու խաչվառով դիմաւորել Ռուսաց զօրքին :

Երբ Ռուսները մտնում են բերդը , Պատկերին տուեցին հարցմունքը լինում է ցորենի ամբարի տեղի մասին . եւ երբ ամբարի դուռը բանում են՝ մեծ ամբար լի ցորենով . նա ուրախութիւնից երեսի խաչակնքում է եւ պառկում ցորենի վերայ :

(Շարունակելի)



